

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 136**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհուրդի  
2016թ. փետրվարի 29-ին կայացած նիստի

- Նախագահությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
- Քարտուղարությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
գիտական քարտուղար Ա.Այվազյանի
- Մասնակցությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի  
անդամների (ներկայության թերթիկը կցվում է):

1. ՀՀ ՊԿԱ հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտների թեկնածուական  
ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեզիրջյան:

2. Ընթացիկ հարց: Հովսեփ Իսրայելի Մովսեսյանի «Ազգային անվտանգության  
ապահովման և քաղաքական լեգիտիմության հիմնախնդիրները Հայաստանի  
Հանրապետությունում» վերտառությամբ աշխատանքը տպագրության երաշխավորելու  
հարցի քննարկումը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչ  
Մ.Մարգարյան:

3. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայում հայցորդ  
ձևակերպվելու համար ստացված դիմումի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեզիրջյան:

4. Ընթացիկ հարց: Գ.Գ.Հարությունյանի «Սահմանադրական մշակույթ. պատմության  
դասերը և ժամանակի մարտահրավերները» վերտառությամբ աշխատանքը  
վերահրատարակել երաշխավորելու հարցի քննարկումը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար  
Ա.Այվազյան:

1. Լսեցին՝ ՀՀ ՊԿԱ հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտների  
թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների  
հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Որոշեցին՝

Ակադեմիայի Հանրային կառավարման ամբիոնի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Տիգրան Գևորգի Էլբակյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Տնտեսական համակարգի բարեփոխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հովսեփ Իվանի Աղաջանյանին:

2. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Հովսեփ Իսրայելի Մովսեսյանի «Ազգային անվտանգության ապահովման և քաղաքական լեգիտիմության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ աշխատանքը տպագրության երաշխավորելու հարցի քննարկումը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան:

Որոշեցին՝

Երաշխավորել տպագրության Հովսեփ Իսրայելի Մովսեսյանի «Ազգային անվտանգության ապահովման և քաղաքական լեգիտիմության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ աշխատանքը:

3. Լսեցին՝ Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայում հայցորդ ձևակերպվելու համար ստացված դիմումի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Որոշեցին՝

- Լիանա Սերյոժայի Մելոյանին ձևակերպել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ՝ վճարովի հիմունքներով:
- Իրավագիտության ամբիոնի ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Լիանա Սերյոժայի Մելոյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում

ամրագրված մարդու իրավունքների իմպլեմենտացիայի առանձնահատկությունները  
«Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների համատեքստում»,  
գիտական ղեկավար՝ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Վոլոդյա Համբարձումի  
Հովհաննիսյանին:

4. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Գ.Գ.Հարությունյանի «Սահմանադրական մշակույթ.  
պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» վերտառությամբ աշխատանքը  
վերահրատարակել երաշխավորելու հարցի քննարկումը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար  
Ա.Այվազյան:

Որոշեցին՝

Երաշխավորել վերահրատարակման Գ.Գ.Հարությունյանի «Սահմանադրական  
մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» վերտառությամբ  
աշխատանքը:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար

Ա.Այվազյան

29 փետրվարի 2016թ.

Կ.Տ.